ՄԱՐԱՔԵՇԻ 1994թ. ԱՊՐԻԼԻ 15-Ի ՀՌՉԱԿԱԳԻՐ

Նախարարները,

ներկայացնելով Ուրուգվայի բազմակողմ բանակցությունների փուլին մասնակցած 124 Կառավարություններն ու Եվրոպական Համայնքները՝ 1994թ. ապրիլի 12-15-ին Մարաքեշում (Մարոկկո) կայացած նախարարների մակարդակով Առևտրի բանակցությունների հանձնախմբի եզրափակիչ նիստի առթիվ,

վկայակոչելով Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլն սկսելու մասին 1986թ. սեպտեմբերի 20-ին Պունտա դել էսթեում (Ուրուգվայ) ընդունված Նախարարական հռչակագիրը,

վկայակոչելով Մոնրեալում (Կանադա) և Բրյուսելում (Բելգիա) համապատասխանաբար 1988թ. և 1990թ. դեկտեմբերին անցկացված Նախարարական ժողովներում ձեռք բերված առաջխաղացումը,

նշելով, որ բանակցություններն ըստ էության եզրափակվել էին 1993թ. դեկտեմբերի 15-ին,

վճռական լինելով՝ Ուրուգվայի փուլի հաջողությունն ամրապնդելու առևտրի համաշխարհային համակարգում իրենց տնտեսությունների մասնակցության միջոցով, հիմնվելով ազատ, շուկայամետ քաղաքականության և Ուրուգվայի փուլի Համաձայանգրերով ու Որոշումներով սահմանված պարտավորությունների վրա.

այսօր ընդունեցին հետևյալը.

ՀՌՉԱԿԱԳԻՐ

1. Նախարարները ողջունում են Փուլի եզրափակմամբ ներկայացված պատմական այն ձեռքբերումը, որը, նրանք հավատում են, որ կամրապնդի համաշխարհային տնտեսությունն ու կտանի դեպի ավելի մեծ առևտուր, ներդրումներ, զբաղվածություն և եկամտի աճ ամբողջ աշխարհում: Նրանք, մասնավորապես, ողջունում են.

- ավելի ամրապնդված ու հստակ իրավական կառուցվածքը, որը նրանք ընդունել են միջազգային առևտուր իրականացնելու համար, ներառյալ՝ վեճերի կարգավորման ավելի արդյունավետ ու վստահելի գործակառույցը,
- մաքսադրույքների համաշխարհային իջեցումը 40 տոկոսով, ապրանքների մասով շուկաներ բացելու ավելի ընդգրկուն համաձայնագրերը և մաքսային պարտավորությունների շրջանակների էական ընդլայնմամբ պայմանավորված առավել մեծ կանխատեսելիությունն ու ապահովվածությունը, և՝
- ծառայությունների առևտրի և առևտրին առնչվող մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության համար հիմնադրույթների բազմակողմ կառուցվածքի ստեղծումը, ինչպես նաև բազմակողմ առևտրի ամրապնդված դրույթները գյուղատնտեսության ու մանածագործվածքների և հագուստի բնագավառներում:

2. Նախարարները հաստատում են, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ստեղծումը տանում է դեպի համաշխարհային համագործակցության նոր ժամանակաշրջան՝ արտացոլելով հանուն իրենց ժողովուրդների շահի ու բարեկեցության ավելի բարեխիղճ և ազատ առևտրի բազմակողմ համակարգում գործելու համատարած ցանկությունը: Նախարարներն արտահայտում են հովանավորչական ամեն տեսակի ճնշումներին դիմադրելու իրենց վճռականությունը: Նրանք հավատում են, որ Ուրուգվայի փուլում ձեռք բերված առևտրի ազատականացումը և ամրապնդված կանոնները կտանեն դեպի ավելի ու ավելի ազատ համաշխարհային առևտրի միջավայր: Նախարարները հանձն են առնում՝ անմիջապես ու մինչև ԱՀԿ ուժի մեջ մտնելը չձեռնարկել ոչ մի առևտրային միջոց, որը կնվազեցնի կամ վնասակար ազդեցություն կունենա Ուրուգվայի փուլի բանակցությունների արդյունքների կամ դրանց իրականացման վրա:

3. Նախարարները հաստատում են առևտրի, փողի և դրամամիջոցների__ոլորտներում վարվող

քաղաքականության ավելի մեծ համաշխարհային համաձայնեցվածության ձգտելու իրենց վճռականությունը, ներառյալ՝ այդ նպատակով ԱՀԿ-ի, ԱՄՀ-ի և Համաշխարհային դրամատան միջև համագործակցությունը:

4. Նախարարները ողջունում են այն փաստը, որ Ուրուգվայի փուլին մասնակցությունն զգալիորեն ավելի լայն էր, քան առևտրի բոլոր նախորդ բազմակողմ բանակցություններին և, հատկապես, որ զարգացող երկրները նկատելի գործուն դեր են խաղացել դրանում: Սրանով նշանավորվեց պատմական քայլ դեպի համաշխարհային առևտրի ավելի հավասարակշռված և միասնականացված ընկերակցությունը: Նախարարները նշում են, որ այն ժամանակաշրջանում, երբ բանակցությունները ընթացքի մեջ էին, տնտեսական բարեփոխումների նշանակալի միջոցառումներ և առևտրի ինքնուրույն ազատականացում է իրականացվել զարգացող շատ երկրներում ու նախկին կենտրոնացված ծրագրմամբ տնտեսություններում:

5. Նախարարները վկայակոչում են, որ բանակցությունների արդյունքներն ընդգրկում են զարգացող տնտեսությունների համար տարբերակված և ավելի բարենպաստ մոտեցում նախատեսող դրույթներ, ներառյալ՝ առավել թույլ զարգացած երկրների առանձնահատուկ իրավիճակի նկատմամբ հատուկ ուշադրությունը: Նախարարներն ընդունում են առավել թույլ զարգացած երկրների համար այս դրույթների իրականացման կարևորությունն ու հայտարարում են, որ մտադիր են շարունակել աջակցել ու նպաստել առևտրի և ներդրումների նրանց հնարավորությունների ընդլայնմանը: Նրանք համաձայն են Նախարարական համաժողովի և ԱՀԿ համապատասխան մարմինների միջոցով պարբերաբար վերաքննելու առավել թույլ զարգացած, ինչպես նաև սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրների վրա Փուլի արդյունքների ազդեցությունը՝ նպատակ ունենալով խթանել դրական միջոցառումներ, որոնք նրանց թույլ կտան հասնելու զարգացման իրենց նպատակներին: Նախարարներն ընդունում են, որ կարիք կա ամրապնդելու ՄԱԳՀ-ի և ԱՀԿ-ի՝ իրենց իրազեկության ոլորտներում ավելի ընդլայնված տեխնիկական աջակցություն տրամադրելու կարողությունը և, հատկապես, էականորեն ընդլայնելու դրա տրամադրումը առավել թույլ զարգացած երկրներին:

6. Նախարարները հայտարարում են, որ իրենց կողմից «Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքները պարունակող եզրափակիչ փաստաթղթի» ստորագրումը և համապատասխան Նախարարական որոշումների ընդունումը սկիզբ է դնում ՄԱԳՀ-ից ԱՀԿ-ին անցմանը: Նրանք, մասնավորապես, ստեղծել են Նախապատրաստական հանձնախումբ՝ ԱՀԿ ուժի մեջ մտնելու հիմքը դնելու համար, և պարտավորում են ձգտել ավարտել բոլոր այն քայլերը, որ անհրաժեշտ են ԱՀԿ համաձայնագիրը վավերացնելու համար, որպեսզի այն ուժի մեջ մտնի 1995թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո՝ հնարավորին չափ շուտ: Նախարարներն այնուհետև ընդունեցին Առևտրի և շրջակա միջավայրի մասին որոշում:

7. Նախարարներն իրենց անկեղծ երախտագիտությունն են հայտնում Նորին Մեծություն Հասան II Թագավորին՝ այս Նախարարական ժողովի հաջողության մեջ նրա ունեցած անձնական ներդրման համար, և նրա կառավարությանն ու Մարոկկոյի ժողովրդին՝ նրանց ջերմ հյուրընկալության և գերազանց կազմակերպում ապահովելու համար: Այն փաստը, որ Մարաքեշում է անցկացվել Ուրուգվայի փուլի այս եզրափակիչ Նախարարական ժողովը, մեկ անգամ ևս ապացուցում է Մարոկկոյի հավատարմությունը համաշխարհային ազատ առևտրի համակարգին և ձգտումը համաշխարհային տնտեսությանը լիարժեքորեն միանալուն:

8. Ընդունելով և ստորագրելով Եզրափակիչ փաստաթուղթը և ընդունման համար բացելով ԱՀԿ համաձայնագիրը, նախարարները Առևտրի բանակցությունների հանձնախմբի աշխատանքը հայտարարում են ավարտված և Ուրուգվայի փուլը՝ պաշտոնապես եզրափակված: